ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«14» 09 2011թ. N: 292-Ա գ.Գյումրի

«ՄԵԾ ՄԱՆԹԱՇԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 118 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերի,56-րդ հոդվածի 2-րդ կետի, 67-րդ հոդվածի 1-ին կետի«ա» և «է» ենթակետերի,« Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի N 1023-Ն որոշման 2-րդ կետի պահանջի.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Մեծ Մանթաշի առողջության կենտրոն » փակ բաժնետիրական ընկերության 4100000 դրամ անվանական արժեքով մեկ հատ հասարակ (սովորական) բաժնետոմսը բաժանել և փոխարկել 4100000 հատ հասարակ (սովորական) բաժնետոմսի, մեկ բաժնետոմսի արժեքը սահմանելով 1 դրամ:
2. «Մեծ Մանթաշի առողջության կենտրոն » փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը ավելացնել 48424470 դրամով, այն սահմանելով 52524470 դրամ, որը համապատասխանում է 52524470 հասարակ (սովորական) բաժնետոմսի՝ մեկ բաժնետոմսի արժեքը՝ 1 դրամ:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2000 թվականի նոյեմբերի 6-ի «Շիրակի մարզի թվով 47 առողջապահական ՊՓԲԸ-ների անվանափոխման և նրանց կանոնադրությունները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական

օրենսգրքի պահանջներին համապատասխանեցնելու մասին>> թիվ 118 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի << Մեծ Մանթաշի առողջության կենտրոն >> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<4.1 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 52524470 դրամ, որը կազմում է 52524470 հասարակ (սովորական) բաժնետոմս: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1 դրամ:

Բոլոր 52524470 հասարակ (սովորական) բաժնետոմսերը տեղաբաշխված են և պատկանում են հիմնադիրին՝ Հայաստանի Հանրապետությանը:>>:

4.Հանձնարարել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի << Մեծ Մանթաշի առողջության կենտրոն >> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Աիդա Զախոյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան փաստաթղթերի փաթեթը ներկայացնել իրավաբանական անձանց Պետական ռեգիստրի գործակալության տարածքային բաժին, պետական գրանցում կատարելու համար:

5.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Հովհաննես Հովհաննիսյանին:

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետ

Ա. Գիզիրյան

Իսկականի հետ ճիշտ է